

VOTE

¡VOTAR!

BOTO

ԲՎԵԱՐԿԵՔ

투표



2020 թ. փետրվարի 22 -ից մարտի 3-ը



Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել՝

GLENDALEVOTES.ORG

կամ զանգահարել (818)548-4000 հեռախոսահամարով:

Para más información llame al

Para sa karagdagang impormasyon tawagan ang numero

Ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել

자세한 내용은 전화 하십시오

(818) 548-4000

 @cogCityClerk



Լոս Անջելեսի վարչաշրջանը ընտրատեղամասերից անցում է կատարել քվեարկության կենտրոնների, որոնք ընտրողներին հնարավորություն են տալիս քվեարկել վարչաշրջանի ցանկացած քվեարկության կենտրոնում՝ 11-օրյա ժամկետում՝ սկսած փետրվարի 22-ից՝ շաբաթ օրվանից: Լոս Անջելեսի վարչաշրջանի ցանկացած քվեարկության կենտրոնում այս ընտրության համար քվեարկության վերջին օրն է երեքշաբթի, 2020 թ. մարտի 3-ը: Գլենդելի տարածքում քվեարկության կենտրոնների ցանկի համար այցելե՛ք GlendaleVotes.org:

Քվեարկության կենտրոններն առաջարկելու են նոր, լիովին հասանելի սարքեր՝ քվեաթերթիկների նշման համար, որոնք կհեշտացնեն քվեարկությունը, ներառյալ՝ ապահովելով քվեաթերթիկի թարգմանություն՝ 12 լեզուներով: Այս սարքերը հնարավորություն կտան ընտրողներին քվեարկել Էկրանին, վերանայել իրենց ընտրությունը, այնուհետև տպել քվեաթերթիկը՝ վերջնական ստուգման համար: Քվեաթերթիկը վերջնական ստուգելուց հետո ընտրողներն այն կտեղադրեն սարքի մեջ, որն անմիջապես այն կտեղափոխի ապահով քվեատուփի մեջ:

Կարևոր է նշել, որ մեկ պաշտոնի համար չորսից ավել թեկնածուների դեպքում նրանց անունները կհայտնվեն բազմակի Էկրաններին, և բոլոր թեկնածուների անունները դիտելու և իրենց ընտրությունը կատարելու համար ընտրողները պետք է սեղմեն Էկրանին ներքևի մասում գտնվող “MORE”/ «ԱՎԵԼԻՆ» կոճակը:

Քվեարկության կենտրոնների և քվեաթերթիկների նշման սարքերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք vsap.lavote.net:

